

Տ. ՄՈՄԻԿ ՎԱՐԴԱՊԵՏ ՍԱՐԳՍՅԱՆԻ ԱՅՑԸ ԼԻԲԱՆԱՆ

Սույն թվականի մարտի 16-ին Նորին Սուրբ Օծություն Տ. Տ. Վազգեն Առաջին Ամենայն Հայոց կաթողիկոսի օրհնությամբ և Բեյրութի Կրոնասեր Տիկնանց Համախմբումի վարչության հրավերով Մայր Աթոռի միաբան Տ. Մոմիկ վարդապետ Սարգսյանը այցելեց Բեյրութ՝ մասնակցելու վերոհիշյալ Համախմբումի նախաձեռնությամբ կազմակերպված տարեկան հանդիսությանը, իբրև ներկայացուցիչը Մայր Աթոռի:

Բեյրութի միջազգային օդանավակայանում Տ. Մոմիկ վարդապետին դիմավորում և բարի գալուստ է մաղթում լիբանանահայ ծանոթ ազգային և Մայր Աթոռի բարերար տիար Գեղամ Տանձիկյանը, որի բնակարանում հյուրընկալվում է հայր սուրբը Բեյրութում իր կեցության բոլոր օրերին:

Մարտի 27-ին, կիրակի օրը, Ծաղկազարդի տոնի առթիվ, Տ. Մոմիկ վարդապետը տեղի հայոց Ս. Հարություն եկեղեցում մատուցում է ս. պատարագ և Բանին կենաց քարոզությամբ մխիթարում հավատացյալ ժողովրդին:

Նույն օրը, ժամը 13-ին, Մայր Աթոռի ներկայացուցիչ հայր սուրբը, որպես պատվո հյուր, ներկա է լինում Կրոնասեր Տիկնանց Համախմբումի կողմից կազմակերպված պաշտոնական ճաշկերույթին: Հավարտ ճաշկերույթի Տ. Մոմիկ վարդապետը հրավիրվում է Ամենայն Հայոց կաթողիկոսի ողջույնն ու հայրապետական օրհնությունները փոխանցելու Համախմբումի ժրաջան անդամուհիներին և բոլոր ներկաներին: Նա գնահատանքով և դրվատանքով է արտահայտվում Ս. Էջմիածնի Կրոնասեր Տիկնանց Համախմբումի եկեղեցանվեր և հայրենասիրական գործունեության մասին՝ նշելով, որ Համախմբումի վարչությունն ու նրա բոլոր անդամները մոտ քառորդ դար է, ինչ հավատարմորեն և մեծ նվիրումով ծառայում են Հայաստանյայց Մայր Եկեղեցուն և նրա բազմադարյան կենտրոն Ս. Էջմիածնին: Այս առթիվ հայր սուրբը իր շնորհակալությունն է հայտնում Համախմբումի վարչությանը, որի՝ Լիբանան այցելության հրավերը օգտակար մի առիթ է հանդիսացել իրեն՝ ծանոթանալու լիբանանահայ գաղթօջախի ազգային և եկեղեցական կյանքին:

Մարտի 23, 24 և 28 օրերին Տ. Մոմիկ վարդապետը, պատասխանելով Բեյրութի Դեմիրճյան և Թեքեյան վարժարանների, ինչպես նաև Սահակյան—Լևոն Մկրտչյան քոլեջի տնօրենությանց հրավերներին, այցելում է վերոհիշյալ ազգային ուսումնական հաստատությունները, ջերմ հանդիպումներ ունենում այդ հաստատությանց պաշտոնեության, ուսուցիչների և աշակերտության հետ՝ փոխանցելով բոլորին Մայր Աթոռ Ս. Էջմիածնի, նրա Գահակալի օրհնությունները և մաղթելով աշակերտներին, որ իրենց ուսման մեջ լինեն միշտ առաջադեմ, աչքի լույսի պես պահպանեն իրենց մայրենի լեզուն և հավատարիմ մնան մեր նախնյաց լույս հավատքին ու մեր ժողովրդի ազգային ավանդություններին:

Բեյրութում գտնվելու օրերին Տ. Մոմիկ վարդապետը Անթիլիասի Կաթողիկոսարանում այցելում է Մեծի Տանն Կիլիկիո Նորին Սուրբ Օծություն Տ. Գարեգին Բ կաթողիկոսին, որի հրավերով մարտի 20-ին, կիրակի օրը, Անթիլիասի Մայր տաճարում ներկա է լինում Տանն Կիլիկիո հանգուցյալ Տ. Խորեն Ա կաթողիկոսի մահվան քառասունքի առթիվ մատուցված ս. պատարագին և մասնավոր հոգեհանգստյան պաշտոնին:

Հայր սուրբը այցելում է նաև Հաճըն թաղամասի հայոց Ս. Գևորգ եկեղեցի և Բեյրութում լույս տեսնող հայկական օրաթերթերի խմբագրությունները:

Մարտի 30-ին Տ. Մոմիկ վարդապետը, հրաժեշտ առնելով Կրոնասեր Տիկնանց Համախմբումի վարչության անդամներից և բեյրութահայ գաղութից, վերադառնում է Մայր Աթոռ Ս. Էջմիածին լավագույն տպավորություններով: